Հարգելի հաճախորդ,

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ Բանկի ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր հանդիսացող այն հաճախորդները, ովքեր 2020թ. մարտի 16-ից մինչև մայիսի 31-ը ընկած ժամանակահատվածում օգտվել են վարկային արձակուրդից և ունեն այդ ժամկետում կուտակված վարկային պարտավորություններ, դրանց վճարումները վերաբաշխվում են հետևյալ կարգով՝

Վարկատեսակի անվանումը	Վերաբաշխման կարգը
Ապառիկ և առանց գրավ (առանց երաշխավորության) վարկեր	2020թ. հուլիս ամսից սկսած՝ կուտակված պարտավորությունները գումարվում են վարկի մայր գումարի մնացորդին, և վարկի վճարման ժամկետը երկարաձգվում է չկատարված վճարումների ամիսների քանակով, ու այդ վճարման ենթակա գումարը վերաբաշխվում է երկարաձգված ամիսների վրա:
մինչև 30.06.2021թ. ներառյալ մարման վերջնաժամկետ ունեցող այլ վարկատեսակների համար, այդ թվում՝ երաշխավորության ապահովվածությամբ ապառիկ վարկեր*	2020թ. հուլիս ամսից սկսած՝ կուտակված պարտավորությունները գումարվում են վարկի մայր գումարի մնացորդին, և վարկի վճարման ժամկետը երկարաձգվում է 3/երեք/ ամսով, ու այդ վճարման ենթակա գումարը վերաբաշխվում է երկարաձգված ամիսների վրա:
30.06.2021թ.-ից հետո մարման վերջնաժամկետ ունեցող այլ վարկատեսակների համար, այդ թվում՝ երաշխավորության ապահովվածությամբ ապառիկ վարկեր*	2020թ. հուլիս ամսից սկսած՝ կուտակված պարտավորությունները գումարվում են վարկի մայր գումարի մնացորդին, և այդ վճարման ենթակա գումարը վերաբաշխվում է վարկի վճարման հետագա ամիսների վրա:

*Պարտավորությունների վերաբաշխման պայմանները չեն տարածվում հիփոթեքային (ձեռքբերում, կառուցում, վերանորոգում) և/կամ «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի և/կամ «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից վերաֆինանսավորվող վարկերի վրա:

2020թ. մարտի 13-ից մինչև մայիսի 31-ը ընկած ժամանակահատվածում վարկային արձակուրդից օգտված հիփոթեքային և/կամ «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի և/կամ «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից վերաֆինանսավորվող վարկեր ունեցող վարկառուների համար վարկերի մարման ժամանակացույցերը վարկառուի կողմից մինչև 2020թ. հունիսի 8-ը ներառյալ Բանկին ներկայացված դիմումով կարող են.

- ✓ երկարաձգվել առավելագույնը 6 ամիս ժամկետով կամ
- ✓ փոփոխվել առանց երկարաձգման՝ մայր գումարի վերաբաշխումով:

Տվյալ վարկերի կուտակված տոկոսագումարը պետք է վճարվի մինչև 31.12.2020թ.՝ կնքելով նաև Բանկի հետ կուտակված պարտավորության հետաձգված վճարման համաձայնագիր: